

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«ԲԱԶՄԱՎԷՊ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ-ԿՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ, ԲԱՑԱՌԻԿ ԹԻՎ «ԲԱԶՄԱՎԷՊ»Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ, ՎԵՆԵՏԻԿ, 1994 Թ., 504 էջ

Իր գոյության 150-ից ավելի տարիների ընթացքում շատ «բաց տիկներ» է ունեցել «Բազմավեպ» հայազորական-քաղաքական հանդեսը: Դրանք նվիրված են եղել հայ և համաշխարհային մշակույթի պատմության ճշմանակալի իթադարձություններին և ականավոր անհատների հոբելյաններին: Հիշատակենք Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակին (1985), Վարդանանց դուցազնամարտի 1500-ամյակին (1951), Բայրոնին (1921), Նապոլեոնին (1924), Դանթեին (1985), Ներսես Ծնորհալուն (1973), Մխիթար Աքբային (1949, 1976) և այլոց նվիրված համարները, որոնք առանձնացել են իրենց պարունակության բազմազանությամբ և բովանդակության հարստությամբ:

Այս իմաստով բացառություն չէ նաև հանդեսիս 1994ի հոբելյանական հատորը, որ ընթերցողի տեսանկյունից արված կետերին: Այն բացվում է «Հարգանք խորին 150-ամյա «Բազմավեպ»ին» խմբագրականով, որ հեղինակել է բազմապատակ գիտնական, Արևելյան Եվրոպայի և Հայաստանի կաթողիկե հայոց առաջնորդ Ներսես Տեր-Ներսեսյանը: Լինելով հայ լրագրության մերօրյա անհայտի վերջին տասնամյակների գործում վկան ու պատասխանատու աշխատակիցը, իսկ 1957—1964 և 1974—1979 թվականներին նաև խմբագիրն ու խմբագրատեղը, նա տալիս է վերջին հիանալի գունեղ նկարագրակազմը, պատկերավոր ոճով պատմում այն նվիրյալների մասին, որոնց ջանքերի շնորհիվ լույս աշխարհ եկան «Բազմավեպ»ի հատորներն ու մխիթարյան հայրերի մնացյալ գրական հունձքը:

Խորհրդանշական է, որ հիշյալ խմբագրականին անմիջապես հաջորդում է 1843ին լույս տեսած «Բազմավեպ»ի անդրանիկ համարի Առաջաբանը, որտեղ ի թիվս այլ մտքերի կարդում ենք հետևյալը. «Եվրոպացվոց նախելով քանի մը արևելյան ազգեր ալ սկսան իրենց հին ուսումնասիրությունը ձեռք առնել՝ որ առաջ երթան: Ասոնց մեջ գլխավորներն մեկն ալ մեր ազգն է, որ աս տարիներս մասնավոր ջանք մը ունի բարեկիրք և ու-

սումնական ազգերն ետ չմնալու ... Ասոնք գիտնալով ու ազգասեր կարդացողներն հորդորվելով՝ հանձն առինք ասկե ետքը «Բազմավեպ» անունով օրագիր մը հանելու, որ համառոտ՝ պարզ ու զվարճալի ոճով, հասկըցնե մեր ազգին, թե հիմա Եվրոպային մեջ որչափ կամ ինչ կերպով առաջ կերթան ամեն տեսակ ուսմունքը»:

Մշակութային այս խնկելի հոբելյանի առթիվ ստացված շնորհավորագրերի և նամակների տակ կարդում ենք Ամենայն հայոց կաթողիկոս, երջանկահիշատակ Վազգեն Ա-ի, Մեծի տսան Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ի, Կաթողիկե հայոց կաթողիկոս-պատրիարք Հովհաննես Պետրոս ԺԸ Գասպարյանի և նշանավոր այլ կրոնական-մշակութային գործիչների ստորագրությունները, որոնցում նրանք իրենց հիացմունքն են արտահայտում և գնահատանքի խառք բերում 150-ամյա «Բազմավեպ»ին:

Հ. Սահակ վրդ. Ծեմենյանի՝ Մխիթարյան միաբանության 1800—1846 թվականների պատմությունն ընդգրկող տակավին անտիպ աշխատությունից մեկ հատված տպագրված ենք տեսնում այս տարեհամարում: Այն կրում է «Բազմավեպ»ին ծնունդը՝ վերնագիրը և ժամանակակից ընթերցողին հաղորդակից է դարձնում հիմնադիր-խմբագիր Գաբրիել վրդ. Այվազովսկու և նրա միաբանակից եղբայրների մտածումներին ու ծրագրերին, պատմում հանդեսի լույսընծայման հանգամանքների ու դժվարությունների, այն մեծ սկզբի մասին, որ ունեցավ մեծ արդյունավոր և ազգաշահ շարունակություն:

«Բազմավեպ»ի ներկա խմբագիր Բ. Տանատ Եարտըմյանն իր «Մխիթարյան գաղափարական և մխիթարյան ինքնություն» ծավալուն հոդվածում նպատակ է դրել պարզելու Մխիթարյան միաբանության դիմագիծն ու նկարագիրը հասկանալու տարրերը, սխեմներն ու մխիթարյան անհատական թե հավաքական ինքնության գիտակցությունը, կատարելու նոր գնահատումներ: Ամենևին էլ ոչ դյուրին այս աշխատանքը նա բնականաբար սկսում է Մխիթար Աքբաբոր անձի ու գործի քննությունից, մի մարդու, որ վերանորոգելով հայ

վանականության նախկին կարգապահությունը՝ հիմնը որեք վանական և ուսումնագիտական այնպիսի հաստատության, որ առաջին իսկ քայլերից ծավալեց հարգանք ու խոնարհում պարտադրող մի մեծաբան գործունեություն՝ Ապատելով հայ ժողովրդի իմացական, գրական և մշակութային գործերին: Հողվածի ընթերցումից պարզ են դառնում այն հաճախմանը, որոնց պատճառով մեծն Սեբաստացին այդպես էլ չհասկացվեց իր ժամանակի (նաև հետագայի) թե՛ ազգային, թե՛ լատինամետ շրջանակներից: Նա մշտապես աշխատեց «ի հոգևոր յօցուտ և ի լուսաորոշիւն ազգիս մերոյ Հայկազնոյ» և մինչև կյանքի վերջը կապված մնաց իր ազգային-եկեղեցական սրբազան ավանդություններին: Պատահական չէ ուստի, որ հետագա դարերի ընթացքում միայնարյանը դարձավ հայ տիպար հոգևորական և որպես հավատքի մարդ, և որպես գիտական սպասարկու՝ ծառայեց հայրենի մշակույթին:

Գրախրատիկ տարեհամարին վաստակաշատ գիտնական Պողոս Անանյանի ներկայացրած երկու ուսումնասիրություններից առաջինը Գառնիի հունարեն արձանագրությունը ընթերցելու նոր փորձ է, իսկ երկրորդը նվիրված է Մլքե թագուհու անունով ծանոթ «Արծրունյաց տոհմի ավետարանին»: Բանն այն է, որ տարբեր ժամանակներում տարբեր հայագետներ, Ղևոնդ Ալիշանից սկսած, տարբեր ենթադրություններ են արել սույն ավետարանի գրության ժամանակի վերաբերյալ: Ոմանք այն համարել են 902 փրկչական թվականը, մյուսները՝ 862 և այլն: Վերջինս համարելով «միակ կարելի և անհերքելի թվականը»՝ ուսումնասիրության հեղինակը, հենվելով հնագրական դիտումների, կենսադրության առանձնահատկությունների և մանրանկարչական հատկանիշների վրա, նաև այն համեմատելով էջմիածնի փղոսկրե ավետարանի ու Հոսպուլայի Ջ դարի ավետարանի հետ, եզրակացնում է, որ այն ոչ թե գրության, այլ կազմի թվականն է: «Մլքե թագուհին անունով կոչված և ընդհանրացած Ավետարանը պետք է նկատել Արծրունյաց տոհմական ավետարան՝ Ե—Ջ դարերեն եկած» (էջ 127),— գրում է նա:

Միայնարյան հայրերից բացի, «Բազմավեպ»ի հոբելյանական հաստրում իրենց գըրվածքներն են գետեղել Ֆրանսահայ մտավորականներ Գրիգոր Պըտյանը, Մարկ Նշանյանն ու Ջուլյա Գազանճյանը: «Գեղեցկությունը ըստ Գրիգոր Նարեկացիի» Ռեսալըրըրական հոդվածում Գրիգոր Պըտյանը փորձ է անում նորովի բացահայտելու գեղեցկության նարեկյան ըմբռնումը, դրա իմաս-

տաբանական շարժը նրա երկերում՝ «Մատնանից» բացի նաև ներթողներում: Ըստ հողվածագրի «Մատնանից» ողբերգության»-ին մեջ գոյություն ունի տգեղության բացահայտումի ամբողջ ռազմավարություն մը, այնքան տիրական, որ կարելի է մտածել, որ այդ գիրքը մարդկային տգեղության ընդարձակ ողբն է» (էջ 146): Մարկ Նշանյանն իր «Կոստան Ջարյան, անկարելի թատրոնը» հողվածում, քննելով նշանավոր արվեստագետի գրչի արդյունք հանդիսացող և օտար պարբերաթերթերում լույս տեսած ու հայ ընթերցողին սակավածանոթ «Նանակ թատրոնի մասին» (1910) և նույն շրջանի մյուս գրությունները, հաստատում է, որ «Այդ տարիներում ընթացքին (նկատի ունի մեր դարի առաջին 2 տասնամյակները— Լ. Լ.) թատրոնը ոչ միայն զբաղեցուցած է Ջարյանի միտքը, այլ եղած է իր գլխավոր մտահոգությունը» (էջ 176): Մեր մատենագրության պատմությունից ավելի շատ «Ընդդեմ Մայրազունացուն» ճառով հայտնի է դարի հեղինակ Թեոդորոս Քոթեմավորի «Աստվածածնի ներթողը» վերարժևորելու փորձ է ձեռնարկել փարիզացուհի մեր մյուս գրագետը՝ բանաստեղծ-գիտնական Ջուլյա Գազանճյանը: Հակիրճ նախաբանից հետո 8 էջերի վրա նա ներկայացրել է ճիշտ գործի աշխարհաբար վարպետ թարգմանությունը, որից պարզվում է հեղինակի, իրոք որ, «եզակական խառնվածքը՝ զգայուն և թախծոտ, սիրող բորբ և ուժեղ գույներու» (Կյուրեղ Բիպարյան):

Մեզ հասար բոլորովին անսովոր դիտանկյունից գրապատմական կերպարները վերլուծելու և բնորոշելու փորձ է Լուս Անջելեսի UCLA համալսարանի գրադարանի հայկական բաժնի վարիչ Միսածան-Միա Ալվազյանի «Մեղավոր և անմեղ կիներ Ե դարու հայ գրականության մեջ. Հոբիսիստ և Փառանձեմ» հողվածը, որին հաջորդում է նույն համալսարանի դասախոս Կարապետ Մուսնյանի «Սեբեոսի, Ղևոնդ վրդ.ի, Ստեփանոս Ասողիկի և Մատթեոս Ուրհայեցիի ժամանակագրությունը»: Ամերիկյան այս քաղաքում գործող Միսիարյան հայկական դասընթացներին հետևած Բազմիկ Թիրիմյանի անգլերենով շարադրած հետազոտության թեման է «Ազգագանց իրականություններու կազմվածային վերլուծում. Սիյուռքի պարագան»:

Բացառիկ այս թիվը մինչև «Բազմավեպ»ի 150-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի օրերը տարագրված տեսնելու բուն ցանկությունն ու շտապողականությունն են հավանաբար պատճառ դարձել, որ տարատե-

սակ վրիպակների կողքին բացակայում են նաև օտարալեզու հողավածների հայերեն և հայագիր հողավածների խտայերեն կամ ֆրանսերեն ամփոփումները: Բացառություն է թերևս խտայացի պրոֆեսոր Ալեքսանդր Օրենգոյի «Աթանաս եպ.Սերաբյան և իր «Համառոտ քերականութիւն իտալերեն լեզուին» հողվածը, որի հայերեն ամփոփումից իմանում ենք դրանում առկա հարցադրումների և Միսիթար Աքրայի աշակերտներից Աթանաս Սերասյանի ու նրա «Իտալերենի քերականության» մասին (Վենետիկ, 1774):

Հայկ Տեր-Ղևոնդյանի «Զեւերու գործածությունը Հայաստանի մեջ հնագույն դարերեն սկսեալ» ընդարձակ հողվածը կարևոր տեղեկություններ է պարունակում նախորդ դարերում հայերիս օգտագործած գեւերի ու գինատեսակների՝ նետ, միզակ, սո՛ր և այլն, վերաբերյալ: Այդ նպատակով հեղինակն օգտագործել է ամենատարթեր աղբյուրներ՝ դրամներ, մանրանկարներ, բարձրաքանդակներ, կիրառական արվեստի մնուշներ, մատենագրական տվյալներ և այլն: Առարկայական և շոշափելի պատկերացում տալու համար ուսումնասիրութանը կցված են բազմաթիվ լուսանկարներ և գծապատկերներ:

Հանգուցյալ վարդապետ Բ. Միքայել Հովհաննիսյանը «Թաթարները միջնադարյան հայ աղբյուրներու համաձայն» հողվածը շարադրելիս օգտվել է հիմնականում հայ պատմիչներ Հեթումի և կիրակոս Գանձակեցու տվյալներից, որոնք համարելով տալիս է մոնղոլ-թաթարների բարբերի ու հայերիս հետ ունեցած պատմաբարդաբանական հարաբերումների պատմականը:

Խիստ շահեկան է Պարմայի համալսարանի պրոֆեսոր Գաբրիելա Ուլտրոնյանի «Երեւնիա Զեյնաի Բենյունրճյանի կորված «Աշխարհագրությունը» Պոլոնիայի մեջ» հողվածը, որտեղ խոսում է վերջին տարիների իր մի շատ կարևոր ձեռքբերման մասին՝ ուղեկցելով այն համապատասխան լուսապատճեններով:

Թվում է, թե այլևս ավելացնելու ոչինչ չկա Սայաթ-Նովայի երաժշտաբանաստեղծական ժառանգության ուսումնասիրության հարցում: Մինչդեռ այդպես չի մտածում երաժշտագետ Նիկողոս Թանմիզյանը: Վկայությունը նրա ներկայացրած «Սայաթ-Նովան ու միջնադարի հայ երգաստեղծության ընդհանուր ենթախորքի վրա» ուսումնասիրությունն է, որում նախ տալիս է հայկական ու լիջնադարի երաժշտամշակութային ամփոփ պատկերը, ապա անցնում Սայաթ-Նովայի ստեղծագործական դիմապատկերի ուրվագծմանը՝ հստակեցնելով այնպիսի գծեր, որոնք կա՛մ հարկ եղած չափով չեն շեշտվել, կա՛մ տարակար-

ծությունների տեղիք են տվել: Դրանցից նա առանձնացնում է հատկապես 'երկուսը՝ բանաստեղծ-երաժշտի ստացած կրթության և նրա քրիստոնեական աշխարհընկալման ու բարոյականության հարցերը: Երևույթների խորագնին քննությունը գիտնականին քերում է այն համոզման, որ «Սայաթ-Նովան իրեն ժամանակակից թիֆլիսահայ քաղաքային երգ-երաժշտության նկատմամբ ցուցաբերել է այն մոտեցումը, ինչ Կոմիտասը՝ հայ գեղջուկ երգի վերաբերմամբ» (էջ 436):

Ծարունակելով իր էջերում նաև հայրենի գիտնականներին տեղ տալու ավանդույթը՝ «Բազմավեպն» այս անգամ «հյուրընկալել» է հայտնի թանասերներ Օւշանիկ Նազարյանին և Պողոս Նաչատրյանին: Եթե առաջինը քննությանն էր, է ընտրել ԺԸ—ԺԹ դարերի գիտնական-մանկավարժ Հովսեփ Արցախեցու կյանքն ու գործը, ապա երկրորդը գրում է «Գրիգոր Նարեկացուն վերագրված մի երկի հեղինակային պատկանելության մասին»: Այդ երկը «Համառոտից բան խրատու վասն ուղիղ հաստոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» խորագրով խրատական-դավանաբանական ծավալուն ստեղծագործությունն է, որը տպագրվել է դեռևս Յոհան Օրլոդերի «Արամեան լեզուին գանձ» աշխատության մեջ (Ամստերդամ, 1711), ապա Պոլստ պատերազմից հետո Նաչանի հեղինակավոր միջավայրում տեղ գտել հետագա մի շարք ժողովածուներում: Միայն 1840ին լույս տեսած վենետիկյան մի հրատարակության մեջ այս երկը տպագրվեց՝ առանց «Նարեկացի» մականվան: Առհասարակ մեր ձեռագրերի աշխարհում, այնուհետև նաև տպագրիչների «թեթև ձեռքով» բազում Գրիգորների գործեր են այնչալ պատճառներով վերագրվել մեծն Նարեկացուն: Այժմ եկել է ժամանակը յուրաքանչյուր գործ «վերադարձնելու» իր օրինական տիրոջը, ինչը և տվյալ դեպքում անում է հողվածագիրը: Նա ոչ միայն կտրուկ մերժում է սույն գործի՝ Նարեկացունը լինելու հանգամանքը, այլև ենթադրաբար դրա հեղինակ է համարում Գրիգոր Վկայասերին, որի «մշակութային գործունեության մասին շատ է խոսվել, սակայն հանվանե մատնացույց չի արվել նրա որևէ ստեղծագործություն» (էջ 449): «Նրատը» դառնում է այն հիմքը, որ հնարավորություն կընձեռի որոնումներ կատարել և ի հայտ բերել նրան պատկանող նաև ուրիշ երկեր»,— նույն տեղում ավելացնում է նարեկացիագետ-գիտնականը:

Պոլսահայ բանասեր Գևորգ Բամպուրճյանն այս անգամ գիտական հանրույն ուշադրությանն է հանձնել «Մարտիրոս պատրիարք Ղրիմեցի և իր նորահայտ չափածո հիշատակարանը» ուսումնասիրությունը: Այն բաղկացած է 3 մասից. առաջինում տրվում է

ԺԷ դարի այս հայտնի տաղասացի կենսագրությունը, երկրորդում՝ նրա գլխավոր գործերը, իսկ երրորդում ներկայացվում է վերջերս հայտնաբերված և մինչ այժմ անծանոթ Հիշատակարանը:

Բացառիկ այս տարեհամարում առաջին անգամ գտնում ենք նաև Թ դարի հայ մատենագիր Զաքարիա կաթողիկոս Զազեցու «Ի յարտօթեանն Քրիստոսի» ներքողի ֆրանսերեն թարգմանությունը՝ արված Նորվան եպս. Զաքարյանի կողմից:

Տուրք տալով «Բազմավեպ»ի էջերը քանաստեղծական ներշնչանքի պտուղ հանդիսացող քերթվածներին լայնորեն տրամադրելու հին սովորությունը՝ հոբելյանական այս հատորն

ընդգրկում է նմուշներ Վահե Օշականի, Վեհանուշ Թեքեյանի, Զուլալ Գազանճյանի և Տաճատ Եսրտըմյանի քանաստեղծություններից:

Յուրաքանչյուր ոք, ծանոթանալով «Բազմավեպ»ի հրատարակության 150-ամյակի առիթով Վենետիկի Ս. Ղազար կղզում լույս տեսած՝ հանդեսիս թվով ԾԳԲ հատորին և հաղորդվելով նրա հարուստ քովանդակությունը, կարող է Պետրոս Աղայանի նման քացականչել. «Ինչ որ եղա, «Բազմավեպ»ով եղա»:

Լ. Ե. ԼԱՄԻԿՑԱՆ